# ԳԵՈՐԳԻ ՖԵԼԻՔՍԻ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ



Ծնվել է 1982թ. նոյեմբերի 2-ին:

1989-1999թթ. սովորել է Ալ. Շիրվանզադեի անվան թիվ 21 միջնակարգ դպրոց-վարժարանում:

1999-2004թթ. սովորել է ՀՊՄՀ պատմության, աշխարհագրության և իրավագիտության ֆակուլտետի պատմության և իրավագիտության բաժնում:

2004-2007թթ. եղել է ՀՊՄՀ հայոց պատմության ամբիոնի ասպիրանտ:

2005-2006թթ. Հայ-ռուսական էկոլոգիայի, իրավունքի և տնտեսագիտության համալսարանում աշխատել է հայոց պատմության և էկոլոգիայի ամբիոններում որպես իրավունքի դասախոս:

2005թ. ղեկավարել է կամավորական շինջոկատ, որը մասնակցել է <<Հայաստան>> համահայկական հիմնադրամի <<Արցախի վերածնունդ>> ծրագրի շրջանակներում Մարտակերտում իրականացվող շինարարական աշխատանքներին և պարգևատրվել է պատվոգրով:

2006թ. առայսօր Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ուսանողական գիտական ընկերության նախագահն է:

2006-2007թթ. ՀՀԿ կենտրոնական գրասենյակում եղել է կազմակերպչական հանձնաժողովի կազմակերպիչ:

2007թ. առայսօր ՀՀԿ կազմակերպչական հանձնաժողովի ՀՀԿ տարածքային կազմակերպությունների աշխատանքները համակարգող բաժնի ղեկավարն է:

2007թ. առայսօր ՀՀԿ երիտասարդական կազմակերպության գաղափարաքարոզչական հանձնաժողովի պատասխանատուն է:

2008թ. ՀՀ պաշտպանության նախարարի կողմից պարգևատրվել է <<Դրաստամատ Կանայան>> մեդալով:

2009թ. համալսարանի ռեկտորի կողմից պարգևատրվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի մեդալով:

Հայ-ռուսական հարաբերությունների վերաբերյալ մի շարք գիտական հոդվածների հեղինակ է: Ներկայումս աշխատում է թեկնածուական ատենախոսության վրա: